ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (PSRC)
ԵՎ ԱՄՆ ԱՅՈՎԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (IUB)
ՄԻՋԵՎ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ՀՀ ՀԾԿՀ
Սակագնային բաժնի պետ

Երևան, Հայաստան
2011թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՑ Է՝ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՍԱԿԱԳՆԵՐԻ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ) ՍԱՀՄԱՆՈՒՄԸ:

ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ, ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ:

Սահմանված սակագներն ուժի մեջ են մնում որոշումն ընդունվելուց երեսուն օր հետո:

Սակագների գործողության ժամկետը 6 ամսից պակաս չի կարող լինել, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա) լիցենզավորված անձը խախտում է գործունեության լիցենզիայի պայմանները.

բ) սահմանված սակագների մեծությունների՝ դատական կարգով բողոքարկման արդյունքում դատարանի վճռի հիման վրա հանձնաժողովն ընդունում է սակագնի սահմանման վերաբերյալ նոր որոշում:

Հանձնաժողովը կարող է սահմանել լիցենզավորված անձի գործունեության երկարաժամկետ սակագին:

Սահմանված սակագինը կարող է արտահայտել ինչպես որոշակի թվային արժեք, այնպես էլ որոշակի մեծություններից կախված հաշվարկային բանաձ–:

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (PSRC) ԵՎ ԱՄՆ ԱՅՈՎԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (IUB) ՄԻՋԵՎ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես լիցենզավորված անձի, այնպես էլ հանձնաժողովի նախաձեռնությամբ:

Հանձնաժողովը սակագինը վերանայում (վերահաստատում կամ փոփոխում) – որոշում է կայացնում լիցենզավորված անձի վերանայման հայտի փաթեթն ընդունելուց հետո՝ 90-օրյա ժամկետում:

Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ կարող է վերանայել գործող սակագինը – սահմանել նոր սակագին՝ իր կողմից հաստատված ընթացակարգի համաձայն՝ ելնելով լիցենզավորված անձի տնտեսական գործունեության արդյունքներից, ներդրումային ծրագրերի – ապատողներին մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ ներկայացված պահանջների կատարումից:

Գործունեության լիցենզիա ունեցող անձը կարող է բնական գազը վաճառել կամ լիցենզավորված ծառայությունները մատուցել հանձնաժողովի սահմանածից ավելի ցածր սակագնով, պայմանով, որ՝

- չի վերանզվում կամ չի վերանզվի լիցենզավորված գործունեությունը,
- այն նպատակաուղղված չէ շուկայում մենաշնորհային կարգավիճակ ձեռք բերելուն,
- եթե այդ իջեցումը կատարվում է լիցենզավորված անձի շահույթի հաշվին:

Սակագների նման իջեցման դեպքում նոր սակագներ սահմանելիս հանձնաժողովը հաշվի չի առնում սակագների իջեցման հետ–անքով լիցենզավորված անձի հնարավոր վնասները:

Սակագնային քաղաքականության հիմնական խնդիրներն են

- ապահովել համակարգի ընկերությունների ֆինանսական կայունությունը,
- ապահովել ոլորտի նորացման և զարգացման համար ողջամիտ գնով անհրաժեշտ կապիտալի ներգրավումը,
- խթանել գազամատակարարման ծառայությունների անվտանգ և հուսալի մատուցումը ընդունելի և մրցունակ սակագներով,
- խթանել սպառողների կողմից գազամատակարարման ծառայությունների արդյունավետ օգտագործումը:

Գազամատակարարման համակարգում գործում են սակագնային երկու խմբեր.

ա) համակարգի ներսում գործող ընկերությունների կողմից միմյանց մատուցված ծառայությունների՝ *փոխադրման, բաշխման, կարգավարման սակագները,*

բ) գազասպառողներին *ծառայությունների մատուցման կարգավորվող սակագները:*

Սակագների մշակման գործընթացն իրականացվում է մի շարք փուլերով, որոնցից յուրաքանչյուրը հետապնդում է որոշակի նպատակներ և պահանջում որոշակի հաշվարկներ և այդ հաշվարկների կատարման սկզբունքների (մեթոդիկայի) ընդունում:

Առաջին փուլում հաշվարկվում են համակարգի ընկերությունների տարեկան հասույթների մեծությունները, որոնք բավարար կլինեն նրանց ***հուսալի, անվտանգ և շարունակական գործունեության ապահովելու նպատակով*** անհրաժեշտ բոլոր գործառնական ծախսերը կատարելու և ներգրավված կապիտալի դիմաց ***ողջամիտ շահույթ*** ստանալու համար:

Այս հաշվարկներն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ պահանջվող ծախսերի և շահույթի որոշման հաստատված սկզբունքներ (մեթոդիկա):

Երկրորդ փուլում սպառողների և սպառողական խմբերի համար որոշվում է ***ծառայությունների մատուցման արժեքը***՝ տարբեր գործառույթների ծախսերի դասակարգման և անհրաժեշտ հասույթի տարբեր սպառողական խմբերի միջև բաշխման միջոցով:

Երրորդ փուլում ընտրվում են ***սակագների կառուցվածքները*** և հաշվարկվում են ***սակագնային դրույքները:***

1. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՄՈՒԹԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Շարունակական գործունեություն ապահովելու համար ընկերությունները պետք է հնարավորություն ունենան հատուցելու ծառայությունների մատուցման համար կատարված բոլոր ողջամիտ ծախսերը:

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (PSRC)
ԵՎ ԱՄՆ ԱՅՈՎԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (IUB)
ՄԻՋԵՎ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Հայռուսգարդ» ՓԲԸ-ի տարեկան անհրաժեշտ հասույթը (ԱՀ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՀ = ԳԳԱ + ԳՏԱ + ՇՊԾ + ԹԾ + Մ + Շ \quad (1)$$

ԳԳԱ - գնվող գազի արժեքն է առանց ավելացված արժեքի հարկի,

ԳՏԱ - գազի փոխադրման արժեքն է՝ այն տարեկան գումարը, որը «Հայռուսգարդ» ՓԲԸ-ն վճարում է «Տրանսգազ» ՍՊԸ-ին հանրապետության տարածքում գազի փոխադրման համար,

ՇՊԾ - տարեկան շահագործման և պահպանման ծախսերն են,

Մ - հիմնական միջոցների մաշվածությունը և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան է,

Հ - ընկերության կողմից վճարվող հարկերը, բացի ԱԱՀ-ից և շահութահարկից, տուրքերը և օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարներն են,

ԹԾ - թույլատրելի շահույթն է:

«Տրանսգազ» ՄՊԸ-ի տարեկան անհրաժեշտ հասույթը (ԱՀ$_տ$) որոշվում է նույն բանաձևով բանաձևով՝ առանց գնված գազի և փոխադրման արժեքների բաղադրիչների

$$\text{ԱՀ}_{տ} = \text{ՇՊԾ} + \text{ԹԾ} + \text{Մ} + \text{Շ} \qquad (2)$$

Ընկերությունների անհրաժեշտ հասույթը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով վերջին ***12 ամսվա փաստացի ծախսերը որոշ ճշգրտումներով,***

որոնք հաշվի են առնում սակագնային հայտի ներկայացման պահին արդեն հայտնի և նոր սակագնի գործողության ընթացքում ծախսերի և եկամուտների կատարվելիք և ողջամիտ ճշտությամբ չափվող փոփոխությունները:

1.1 ԳՆՎՈՂ ԳԱԶԻ ԳԻՆԸ

$$\P \quad \P^2 \quad = \sum_i C_i V_i$$

C_i, V_i - տարբեր ներմուծողներից և տարբեր ժամկետներում տարվա ընթացքում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից գնվող գազի միավորի 1000 խմ գինն ու քանակն է:

Տարվա ընթացքում գնվող գազի ընդհանուր քանակը՝

$$V = \sum_i V_i$$

որն անհրաժեշտ է տարեկան սպառումն ապահովելու համար, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V = V_з + \Delta V,$$

$V_з$ - տարվա ընթացքում սպառողներին առաքվող գազի քանակն է,

ΔV - հանձնաժողովի կողմից հաստատված մեթոդիկայով հաշվարկված՝ փոխադրման և բաշխման ցանցերում գազի կորուստներն ու սեփական կարիքներն են:

1.2 ԳԱԶԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Գազի ներկրումը, բաշխումը և իրացումն իրականացնող «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն, հանձնաժողովի սահմանված սակագներով, վճարում է գազի փոխադրումն ու պահեստավորումն իրականացնող «Տրանսգազ» ՄՊԸ-ին ծառայությունների դիմաց՝ ապահովելով (2)բանաձևով հաշվարկված այդ ընկերության անհրաժեշտ հասույթը:

1.3 ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Շահագործման և պահպանման ծախսերն (ՇՊԾ) ընդգրկում են.

- արտադրական անձնակազմի աշխատավարձը, այդ թվում՝ սոցիալական ապահովության հիմնադրամի վճարումները,
- շահագործման համար անհրաժեշտ նյութերի ծախսերը,
- նորոգման ծախսերը, որոնք ընդգրկում են ինչպես այլ կապալառու կազմակերպությունների կողմից, այնպես էլ սեփական ուժերով իրականացվող նորոգման աշխատանքների արժեքը,
- բաժանորդների սպասարկման ծախսերը, որոնք ընդգրկում են հաշվիչների սպասարկման, ցուցմունքները վերցնելու, հաշիվներ ներկայացնելու, ծառայությունների վճարների հաշվառման և հավաքագրման ծախսերը (այս ծախսերը բնորոշ են միայն բաշխման և բաժանորդների սպասարկման գործառույթներ իրականացնող «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին),
- վարչական և ընդհանուր բնույթի ծախսեր,
- այլ գործառնական ծախսեր, որոնք կարող են ընդգրկել նաև անհուսալի դեբիտորական պարտքերի թույլատրելի չափերը:

ՇՊԾ-ի մեջ չեն մտնում այն ծախսերը, որոնք կապված չեն լիցենզավորված գործունեության հետ: Այդ ծախսերի համար ընկերություններում պետք է իրականացվի առանձնացված հաշվառում:

Լիցենզավորված ընկերությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառումը հանձնաժողովի կողմից հաստատված հաշվային պլանի և ծախսերի վերագրման կանոնների համաձայն:

Սակագների միջոցով հատուցվում են միայն այն ծախսերը, որոնք հաշվառված են հանձնաժողովի կողմից հաստատված հաշվային պլանին համապատասխան:

Սակագնային հայտ ներկայացնելիս, ընկերությունները պետք է ներկայացնեն նախորդ տարվա աուդիտորի կողմից ստուգված ծախսերը, ընթացիկ տարվա փաստացի (կանխատեսվող) ծախսերը և հաշվարկային տարվա նախատեսվող ծախսերը:

1.4 ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՇԱՀՈՒՅԹ

Թույլատրելի է համարվում շահույթի այնպիսի մեծությունը, որը հնարավորություն է տալիս ընկերություններին կատարել ակտիվների ֆինանսավորման համար ներգրավված կապիտալի հետ կապված պարտավորությունները, և չխոչընդոտել ընկերությունների զարգացման համար անհրաժեշտ լրացուցիչ սեփական կամ փոխառու միջոցների ներգրավմանը:

Թույլատրելի շահույթը հաշվարկվում է.

$$ԹՇ = ՇԲ \times ՇՆ$$

որտեղ՝ ՇԲ - շահույթի հաշվարկման բազան է,
ՇՆ - թույլատրելի շահույթի նորման է:

Շահույթի հաշվարկման բազա է հանդիսանում ընկերության զուտ ակտիվների արժեքը՝

$$ШБ = ООՈԸԱ - ՍՎՈԸԱ - ԿՄ + ՇԿ ,$$

որտեղ՝

ՕՕՈԸԱ - օգտակար և օգտագործվող ճանաչված ոչ ընթացիկ ակտիվների արժեքն է,

ՍՎՈԸԱ - սպառողների կողմից վճարված և չփոխհատուցված ոչ ընթացիկ ակտիվների արժեքն է՝ օրինակ՝ հաշվիչների կամ շինարարության արժեքը,

ԿՄ – կուտակված մաշվածությունն է,

ՇԿ – հանձնաժողովի կողմից թույլատրված շրջանառու կապիտալի մեծությունն է:

Շահույթի բազան ժամանակ առ ժամանակ, բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ, վերահաշվարկվում է, հաշվի առնելու՝

- **օգտակար և օգտագործվող ճանաչված ակտիվներում կատարված ներդրումներն առանց սպառողների կողմից վճարված ներդրումների,**
- **թույլատրված մաշվածությունը,**
- **շրջանառու կապիտալի թույլատրված փոփոխությունը:**

Շահույթի թույլատրելի նորման (ՇՆ) սահմանվում է ընկերության կապիտալի միջին կշռված արժեքին հավասար, որն իրենից ներկայացնում է փոխառու և սեփական կապիտալի միջին արժեքը՝ հաշվարկված կապիտալի կառուցվածքում նրանց բաժնեմասերի կշիռներին համապատասխան:

$$ШН = \frac{\sum_i ФК_i * r_i + УК * r_u}{ФК + УК}$$

$ФК_i$, r_i - համապատասխանաբար **i**-րդ փոխառության չմարված մնացորդն է հաշվարկային տարվա սկզբում և նրա սպասարկման արժեքն է (միավորի մասերով),

УК, r_u - սեփական կապիտալի արժեքն է հաշվարկային տարվա սկզբում և նրա թույլատրելի ողջամիտ) շահույթի նորման (մինչև հարկումը):

1.5 ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մաշվածության ծախսերը հաշվարկվում են զծային եղանակով՝ ելնելով օգտակար և օգտագործվող հիմնական միջոցների սկզբնական (ձեռքբերման) արժեքից և օգտակար կյանքի տևողությունից:

Եթե հիմնական միջոցները օգտագործվում են ցածր օգտագործման գործակցով կամ հզորության (թողունակության) օգտագործման ցածր ժամերի թվով, ապա հանձնաժողովն իրավունք ունի դրանց արժեքների նկատմամբ կիրառել հիմնավորված իջեցնող գործակիցներ:

Սակագների մշակման գործընթացի հաջորդ փուլում իրականացվում է ընկերությունների ծախսերի վերլուծությունը ու բաշխումը՝ ըստ լիցենզավորված գործունեությունների, ծախսերի տեսակների և ապառողական խմբերի: Գնագոյացման նպատակներից մեկը այնպիսի սակագների սահմանումն է, որոնք արտացոլում են տարբեր ապառողներին և ապառողական խմբերին մատուցված ծառայությունների համար ընկերության կողմից կատարվող ծախսերը:

2. ԾԱԽՍԵՐԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծախսերի վերլուծության միջոցով որոշվում է տարբեր սպառողական խմբերի մասնաբաժինը ընդհանուր ծախսերում և կատարվում դրանց բաշխումը սպառողական խմբերի միջև:

Ծախսերի վերլուծությունը բաղկացած է հետևյալ քայլերից՝

1. *ծախսերի ֆունկցիոնալացում,*
2. *ծախսերի դասակարգում,*
3. *սպառողների դասակարգում,*
4. *բաշխման գործակիցների որոշում և ծախսերի բաշխում:*

2.1 Ծախսերի ֆունկցիոնալացում

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն ունի գործունեության երեք ֆունկցիոնալ տիրույթ գազի *ներկրում, բաշխում, համակարգի կարգավարում:*

«Տրանսգազ» ՍՊԸ-ն գործում է երկու տիրույթում *փոխադրում և պահեստավորում:*

Այս փուլում ընկերությունների ծախսերի յուրաքանչյուր տարրը բաժանվում է նշված ֆունկցիոնալ տիրույթների միջև:

2.2 Ծախսերի դասակարգումը

Ծախսերը դասակարգվում են հետևյալ խմբերում՝ ***հաստատուն, փոփոխական և սպառողների սպասարկման.***

Հաստատունն այն ծախսերն են, որոնք ընկերությունները կատարում են անկախ մատակարարված գազի ծավալից և սպառողների քանակից: Դրանք հիմնականում ընկերության հիմնական միջոցների սպասարկման և պահպանման հետ կապված ծախսերն են և այլ ծախսերը, որոնք պետք է հատուցվեն՝ անկախ մատակարարված գազի քանակից:

Փոփոխականն այն ծախսերն են, որոնք փոփոխվում են կախված մատակարարված գազի քանակից: Այդ ծախսերն ընդգրկում են մատակարարվող գազի արժեքը և գազի քանակի հետ կապված որոշ այլ ծախսեր (օրինակ՝ անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման ծախսերը և այլն):

Սպառողների սպասարկման ծախսերն այն ծախսերն են, որոնք անմիջականորեն կապված են սպառողների սպասարկման հետ: Դրանք ընդգրկում են առևտրային հաշվիչների ցուցմունքները վերցնելու, հաշիվների ներկայացման, վճարների հավաքագրման, հաշվառման և այլ ծախսեր, ինչպես նաև հաշվիչների շահագործման հետ կապված ծախսերը:

2.3 Սպառողների դասակարգումը

Սակագների տարբերակումը կարող է կատարվել ***ըստ պահանջվող հզորության, սպառման ծավալների, ժամանակի, միացման պայմանների:*** Տարբերակումն իրականացվում է սպառողներին ըստ խմբերի դասակարգմամբ: Յուրաքանչյուր սպառողական խումբ պետք է բաղկացած լինի միանման սպառման բնութագրեր ունեցող սպառողներից, որոնց գազամատակարարումը և սպասարկումը մոտավորապես նման գնային բեռնվածք է ստեղծում համակարգի համար:

Սպառողների դասակարգման ժամանակ բացի տեխնիկական ցուցանիշներից կարող են հաշվի առնվել նաև տնտեսական ցուցանիշները, ինչպես, օրինակ, ***ծառայության արժեքավորությունը, գների ճկունությունը, այլընտրանքի գոյությունը, ծառայության մրցունակությունը:***

Ելնելով վերը նշվածից՝ առաջարկվում է սպառողների հետևյալ դասակարգումը.

1. Բնակչություն (կենցաղային սպառողներ)
2. Ընդհանուր առևտրային սպառողներ:
3. Սեղմված բնական գազի մատակարարներ:
3. Ջերմային էլեկտրակայաններ:
5. Ջերմամատակարարում:
6. Խոշոր արդյունաբերական սպառողներ:

2.4 Ծախսերի բաշխումը

Վերլուծության հաջորդ փուլում դասակարգված ծախսերը բաշխվում են սպառողական խմբերի միջև:

Այդ բաշխումն իրականացվում է բաշխման գործակիցների միջոցով, որոնք պետք է որոշվեն այնպես, որ հնարավորինս ճշգրիտ արտահայտեն սպառողական խմբերի կողմից ծախսերի առաջացման պատճառները:

Հաստատուն ծախսերի բաշխումն իրականացվում է առանձին սպառողական խմբերի սեփական գագաթնային սպառման մեծությանը համամասնաբար, անկախ նրանից, թե երբ է տեղի ունենում այդպիսի սպառումը: Բաշխման այս եղանակն անվանում են չհամընկնող գագաթնային սպառման վրա հիմնված, ի տարբերություն համընկնող գագաթնային սպառման վրա հիմնված եղանակի, երբ բաշխումն իրականացվում է համակարգի առավելագույն սպառման պահին առանձին սպառողական խմբերի սպառմանը համամասնաբար:

Բաշխման գործակիցները որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$K_{Ni} = \frac{N_i}{\sum_i N_i}$$

որտեղ՝

K_{Ni} - հաստատուն ծախսերի i-րդ սպառողական խմբի բաշխման գործակիցն է,

N_i - i -րդ սպառողական խմբի առավելագույն օրական սպառումն է:

Փոփոխական ծախսերի բաշխումն իրականացվում է սպառողական խմբերի տարեկան սպառման մեծությանը համամասնաբար:

$$K_{Vi} = \frac{V_i}{\sum_i V_i}$$

որտեղ՝

K_{Vi} - փոփոխական ծախսերի i-րդ սպառողական խմբի բաշխման գործակիցն է,

V_i - i-րդ սպառողական խմբի տարեկան սպառումն է:

Սպառողների սպասարկման ծախսերի բաշխումն իրականացվում է սպառողական խմբերում «բերված» սպառողների քանակին համամասնաբար: Նկատի ունենալով, որ տարբեր սպառողական խմբերում ընդգրկված սպառողների սպասարկումը տարբեր ծախսեր են առաջացնում ընկերությունում և որպես միավոր ընդունելով մեկ բնակիչ սպառողը, մնացած խմբերի սպառողների համար կիրառվում են «բերման» գործակիցներ, որոնք այս կամ այն ճշտությամբ արտացոլում են այդ տարբերությունները:

Հաշվի առնելով նշվածը՝ սպառողների սպասարկման ծախսերի բաշխման գործակիցները որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$K_{ni} = \frac{\alpha_i n_i}{\sum_i \alpha_i n_i}$$

որտեղ՝

n_i - i-րդ սպառողական խմբի բաժանորդների քանակն է,

α_i - i-րդ սպառողական խմբի մեկ բաժանորդի բնակիչ բաժանորդին բերման գործակիցն է, որը ցույց է տալիս, թե տվյալ խմբի մեկ բաժանորդի միջինացված սպասարկման ծախսերը մոտավորապես քանի բնակիչ բաժանորդի սպասարկման ծախսերին են համարժեք:

Դասակարգված ծախսերի բաշխումը կատարվում է որոշված բաշխման գործակիցների հիման վրա հետևյալ բանաձևերով՝

$$Ծ_{Ni} = K_{Ni} * Ծ_{N}$$

$$Ծ_{Vi} = K_{Vi} * Ծ_{V}$$

$$Ծ_{ni} = K_{ni} * Ծ_{n}$$

որտեղ՝

$Ծ_{N}, Ծ_{V}, Ծ_{n}$ - համապատասխանաբար համակարգի հաստատուն, փոփոխական և սպառողների սպասարկման ծախսերն են,

$Ծ_{Ni}, Ծ_{Vi}, Ծ_{ni}$ - i -րդ սպառողական խմբի կողմից հատուցվող համապատասխան ծախսերի մասնաբաժինն է:

3. ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՁԵՎԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՐԿ

3.1 ՓՈԽԱԴՐՄԱՆ ՍԱԿԱԳԻՆ

Փոխադրման սակագինը սահմանվում է «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից գազի փոխադրման և պահեստավորման ծառայությունների համար: Ընկերությունը ծառայություններ է մատուցում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին՝ փոխադրելով նրա կողմից ներկրված գազը սահմանից մինչև բաշխողի հետ սահմանազատման կետերը:

Նույն ծառայությունները կմատուցվեն նաև այլ լիցենզավորված անձանց, որոնք գազ են ներկրում սեփական կարիքների կամ արտահանման համար:

Փոխադրման համակարգի շահագործման համար անհրաժեշտ ծախսերը գծային կոմպրեսորային կայանների բացակայության պայմաններում կախված չեն փոխադրվող գազի քանակից և դիտարկվում են որպես հաստատուն՝ հզորության ծախսեր: Գազի պահեստավորման հետ կապված ծախսերի մի մասը կարելի է ընդունել ուղիղ համեմատական պահեստավորված գազի քանակին (օրինակ, կոմպրեսորների աշխատանքի համար ծախսված գազի արժեքը կամ պահեստավորված գազի հետ կապված ֆինանսական ծախսերը), սակայն, քանի որ փոխադրող ընկերությունը գազի սեփականատեր չէ, այդ ծախսերը հատուցվում են գազի սեփականատերերի ծախսերից և չեն ընդգրկվում փոխադրող ընկերության անհրաժեշտ հասույթում:

Գազի փոխադրման սակագինը միադրույք սակագին է, որի համար ծառայության չափման միավորը կարող է լինել.

ա) տրանսպորտային համակարգի թողունակության սահմանափակումների պայմաններում ամենածանրաբեռնված ամսվա առավելագույն օրական սպառումը (հազ.խմ/օր),

բ) տրանսպորտային համակարգի թողունակության սահմանափակումների բացակայության դեպքում փոխադրված գազի քանակի միավորը (հազ.խմ):

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (PSRC) ԵՎ ԱՄՆ ԱՅՈՎԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (IUB) ՄԻՋԵՎ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ա) Փոխադրման սակագինը $U_{տ}$(դր/ամիս.հազ.խմ/օր)՝

$$U_{\text{պ}} = \frac{\text{ԱԿ}_{\text{պ}}}{12\sum_{i} Q_{i\max}}$$

որտեղ $Q_{i\max}$-ը գազի փոխադրման i - րդ պատվիրատուի ամենածանրաբեռնված ամսվա առավելագույն օրական սպառումն է (հազ.խմ/օր):

Գազի փոխադրման պատվիրատուների ամսական վճարները հանդիսանում են հաստատագրված մեծություններ են, որոնք հավասար են՝

$$\text{ԱՎ}_{\text{տ}} = U_{\text{տ}} * Q_{i\max}$$

և անկախ են տվյալ ամսում փոխադրված գազի ծավալից:

Գազի առավելագույն օրական սպառումը որոշվում է պատվիրատուի հաշվիչի միջոցով նախօրոք կատարված չափումների հիման վրա: Եթե այդպիսի չափումներ չեն իրականացվել, ապա այն կարող է որոշվել ձմեռային ամենածանրաբեռնված ամսվա սպառումը բաժանելով ամսվա օրերի թվի վրա: Եթե այդպիսի տվյալներ նույնպես չկան, ապա առավելագույն սպառումը կարող է որոշվել սպառումը սահմանափակող սարքերի թողունակությամբ:

բ) Փոխադրման սակագինը Ստ –ն (դր/հազ.խմ)՝

$$U_{\text{պ}} = \frac{\text{ԱՀ}_{\text{պ}}}{\sum_i V_{\text{պi}}^{\text{պար}}}$$

որտեղ՝ $V_{\text{պi}}^{\text{պար}}$ լիցենզավորված անձի համար տարվա ընթացքում փոխադրված գազի քանակն է (հազ.խմ)՝ չափված տրասպորտային համակարգից պատվիրատուին կամ բաշխողին հանձնելու կետերում:

Գազի փոխադրման ամսական վճարը կկազմի՝

$$\text{Ավ}_{\text{տ}} = U_{\text{տ}} * V_{\text{պi}}^{\text{ամս}}$$

որտեղ՝ $V_{\text{պi}}^{\text{ամս}}$ - տվյալ ամսվա ընթացքում i-րդ պատվիրատուի համար փոխադրված գազի քանակն է, որը որոշվում է հաշվիչների ցուցմունքով, եթե գազի հանձնումը տիրոջը իրականացվում է անմիջականորեն տրանսպորտային համակարգից և հետևյալ բանաձևով՝

$$V_{\text{պi}}^{\text{ամս}} = \frac{V_{\text{բi}}^{\text{ամս}}}{1 - \frac{\alpha_{\text{բ}}}{100}}$$

եթե հանձնումը իրականացվում է բաշխման համակարգի միջոցով: Այստեղ $\alpha_{\text{բ}}$ -ն բաշխման համակարգում գազի կորուստներն են՝ տոկոսներով բաշխման համակարգ մուտք գործած գազի նկատմամբ:

3.2 ԲԱՇԽՄԱՆ ՍԱԿԱԳԻՆ

Բաշխման սակագները կիրառվում են այն լիցենզավորված անձանց (պատվիրատու) համար, որոնք գազ են ներկրում սեփական սպառման կամ արտահանման համար (երբ գազն անցնում է նաև բաշխման համակարգով):

Գազի բաշխման սակագինը միադրույք սակագին է, որի համար ծառայության չափման միավորը կարող է լինել

ա) բաշխման համակարգի թողունակության սահմանափակումների պայմաններում ամենածանրաբեռնված ամսվա օրական առավելագույն սպառումը (հազ.խմօր),

բ) բաշխման համակարգի թողունակության սահմանափակումների բացակայության դեպքում բաշխման համակարգով փոխադրված գազի քանակի միավորը (հազ.խմ)

ա) Բաշխման սակագինը $U_բ$(դր/ամիս.հազ.խմ/օր)՝

$$U_բ = \frac{ԱՎ_բ}{12\sum_i Q_{imax}}$$

որտեղ Q_{imax} -ը գազի բաշխման համակարգով փոխադրման i - րդ պատվիրատուի ամենաճանրաբեռնված ամսվա առավելագույն օրական սպառումն է (հազ.խմ/օր):

Ամսական վճարները հանդիսանում են հաստատագրված մեծություններ են, որոնք հավասար են՝

$$ԱՎ_{բi} = U_բ * Q_{imax}$$

և անկախ են տվյալ ամսում բաշխման համակարգով փոխադրված գազի ծավալից:

Գազի առավելագույն օրական սպառումը որոշվում է պատվիրատուի հաշվիչի միջոցով նախօրոք կատարված չափումների հիման վրա: Եթե այդպիսի չափումներ չեն իրականացվել, ապա այն կարող է որոշվել ձմեռային ամենածանրաբեռնված ամսվա սպառումը բաժանելով ամսվա օրերի թվի վրա: Եթե այդպիսի տվյալներ նույնպես չկան, ապա առավելագույն սպառումը կարող է որոշվել սպառումը սահմանափակող սարքերի թողունակությամբ:

բ) Բաշխման սակագինը Ստ(դր/հազ.խմ)՝

$$U_{բ} = \frac{ԱՎ_{բ}}{\sum_{i} V_{բi}^{պար}}$$

որտեղ՝ $V_{բi}^{պար}$ - i-րդ լիցենզավորված անձի համար տարվա ընթացքում բաշխման համակարգում փոխադրված գազի քանակն է (հազ.խմ)՝ չափված տրասպորտային համակարգից պատվիրատուին հանձնելու կետերում:

Գազի բաշխման ամսական վճարը կկազմի՝

$$ԱՎ_{բi} = U_{բ} * \quad V_{բi}^{ամս}$$

որտեղ՝$V_{բi}^{ամս}$ - տվյալ ամսվա ընթացքում i-րդ պատվիրատուի համար բաշխման համակարգով փոխադրված գազի քանակն է, որը որոշվում է հաշվիչների ցուցմունքով:

3.3 Սպառողական խմբերի մանրածախ սակագներ

Սպառողական խմբերի սակագների հաշվարկի հիմք են հանդիսանում բաշխող ընկերության («ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի) դասակարգված և սպառողական խմբերի միջև բաշխված ծախսերը:

Սակագնային դրույքների հաշվարկներն իրականացվում են միադրույք կամ երկդրույք սակագնային համակարգում:

Բացի այդ, ընկերության կողմից կարող են առաջարկվել սակագնի կառուցվածքի և սակագնային դրույքի հաշվարկների այլ մոտեցումներ:

Ստորև բերված են նշված սպառողական խմբերի առաջարկվող սակագների կառուցվածքը և սակագնային դրույքների հաշվարկը:

Բոլոր սակագներում սահմանվում է ծառայությունների դրույքներից առանձնացված գնվող գազի գինը արտացոլող դրույք, որը կարող է փոփոխության ենթարկվել առանց սակագների փոփոխության ամբողջական հայտ ներկայացնելու՝ գնվող գազի արժեքի կամ դրամի փոխարժեքի փոփոխության դեպքում:


Գնվող գազի արժեքը արտացոլող սակագնային դրույքը ընդհանուր է բոլոր սպառողական խմբերի համար և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՍԴ_{գ} = \frac{\bar{c}}{(1-\frac{\alpha_{պ}}{100})(1-\frac{\alpha_{բ}}{100})}$$

որտեղ՝ $\bar{c}$ - հաշվարկային ժամանակահատվածում ներքին սպառման համար գնվող գազի միավորի միջին կշռութային արժեքն է, որը հավասար է՝

$$\bar{c} = \frac{\sum_i c_i V_i}{\sum_i V_i}$$

Սպառողների սակագները գազամատակարարման համակարգում



ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (PSRC)
ԵՎ ԱՄՆ ԱՅՈՎԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (IUB)
ՄԻՋԵՎ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ծանոթագրություն